Մրցույթ՝ Երևանի «Գևորգ Վարդանյանի անվան թիվ 192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կերպարվեստի (10 դասաժամ), քիմիայի (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ 1 դասաժամ), կենսաբանության (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ 2 դասաժամ), ֆիզիկայի (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ 2 դասաժամ), պատմության (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ 5 դասաժամ), գերմաներենի (14 դասաժամ), ֆիզկուլտուրայի (31 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. հոկտեմբերի 19-ից մինչև 2022 թ. նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. նոյեմբերի 4-ին՝ ժամը 14:30-ին**, Երևանի Գևորգ Վարդանյանի անվան թիվ 192 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Դավթաշեն,

2-րդ թաղամաս: Տեղեկությունների համար զանգահարել (010) 36-98-80 հեռախոսահամարով: